

ներս մտած է: Անոր վրայ շինուած է սեղան մը՝ հանդիսաւոր պատարագներու համար:

Այբին յարեւմեան կողմն անկիւնի սրբոյ այրիս կայ փոքրիկ ծակ մի, այն է գերեզման Լախաւորե Եւայի (Հան. էջ 289), իսկ հիւսիսային կողմը ցոյց կուտային Չրհոր մը ուր ինկած էր մոգերուն աստղը, ըստ Եպիփանի:

Մեր Փրկչին Ս. Ծննդեան ժամանակ պատահեցան հրաշայի աստիկն երեւումը, մոգերու եւ հովիւներու երկրպագութիւնը և հրեշտակաց փառաբանութիւնը: Այս մեծաւթանջ գրուագներու մասին եկեղեցին պահած է աւանդութիւններ զոր պիտի յիշենք կարգաւ:

Աստիկն երեւման աւանդութիւնները. — Աստղին երեւումը կը յիշէ Մատթէոս աւետարանիչ հետեւեալ կերպով. «Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհէմ Հրէաստանի յաւուրս Հերովդէի արքայի, ահա մոգք յարեւելից եկին յերուսաղէմ և ասեն՝ ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից, զի տեսաք զաստղն նորա յարեւելս, և եկաք երկիրպագանել նմա» (Բ. 1-2). «Յայնժամ Հերովդէս զազա կոչեաց զմոգսն, և ստուգեաց ի նոցանէ զժամանակ աստղն երեւելոյ» (Բ. 7). «Եւ նոքա իբրև լուան ի թագաւորէն՝ գնացին, և ահա աստղն զոր տեսին յարեւելս առաջնորդեաց նոցա, մինչև եկեալ եկաց ուր էր մանուկն. իբրև տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն մեծ» (Բ. 9-20):

Ամենէն առաջ ըսենք թէ Ս. Ծննդեան աստղին բոլոր աւանդութիւնները հիմնուած են Ս. Գրոց հետեւեալ խօսքին վրայ. «Ծագեսցէ աստղ Յակոբայ եւ յարիցէ այր յիսրայելէ» (Թու. ԻԴ. 17): Աստղին աւանդութիւնը պարզաբանող գլխաւոր մեկնիչները ասոնք են.